Այսօր տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարել է հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկել է 9 բարեգործական ծրագիր:

Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն Ա.Ի.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» հիմնադրամի տիեզերական ճառագայթների բաժանմունքի գործունեությ անը» և «2012-2013 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետության գիտական ենթակառույցի պահպանման և հետագա զարգացման աջակցություն» ծրագրերը.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Ներսիսյան պուրակի խաղահրապարակի ցանկապատում» և «Վաչե և Թամար Մանուկյան Մատենադարամի» և «Գևորգյան հոգևոր ճեմարանի» կահավորման» ծրագրերը.

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Երեխայի առողջության պետական անձնագրի տպագրություն» ծրագիրը.

«Առդա» բարեգործական հիմադրամի կողմից «Բարեկեցիկ մանկություն և ծերություն 3» ծրագրի ծրագիրը.

«Ջերմիկ անկյուն» հիմնադրամի կողմից իրականացվող «Ջերմիկ անկյուն» խմբային տան ծրագիրը.

«Նոր ժամանակ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հումանիտար նվերներ՝ Արցախի երեխաներին» ծրագիրը:

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: